

## Հ. 45 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ



2

Նախաապրբենական փուլի կազմակերպման  
նպատակներն ու իրականացման ուղիները

Դասվար՝ Սաթենիկ Բաղդասարյան



# Նախաայբբենական փուլի կազմակերպման

## նպատակներն ու իրականացման ուղիները

Վեց տարեկան երեխան դպրոց է գալիս: Այդ պահից երեխայի կյանքում սկսվում է նոր փուլ: Նախաայբբենական փուլից սկսած արդեն ուսուցիչը նպատակ է դնում իր առջև՝ երեխային սովորել սովորեցնելը:

Ըստ ինձ այդ պետք է դառնա հանրակրթական դպրոցի նախնական օղակի ուսումնական գործընթացի կարևորագույն խնդիրը:

Յան Ամոս Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» գրքում գրել է, որ հարկավոր է բացահայտել այնպիսի մեթոդ, որի կիրառման դեպքում ուսուցիչները քիչ սովորեցնեն, իսկ սովորողները շատ սովորեն: Նախաայբբենական փուլում պետք է այս հարցին ուշադրություն դարձնել: Իսկ երբվանի՞ց պետք է սովորել սովորեցնել: Հենց առաջին օրվանից, երբ երեխան դպրոց է գալիս: Երեխայի մոտ, հենց առաջն իսկ օրերից, պետք է սովորելու նկատմամբ վերաբերմունք ձևավորել:

Պետք է նպատակ ունենալ հետաքրքրություն առաջացնել դպրոցի, սովորելու, այբբենարանի, գրքերի նկատմամբ:

Գրաճանաչության ցանկացած մեթոդով աշխատելիս առանձնացվում է նախաայբբենական շրջանը: Այս շրջանի հիմնական խնդիրները բազազան են: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ կազմակերպական և ուսումնական:

### 1. Ուսումնական խնդիրներ՝

ա) Կարդալու կարողության մակարդակը.

- Գիտի մի քանի տառ,
- Գիտի զգալի թվով տառեր,
- Գիտի բոլոր տառերը,
- Կարդում է վանկերով,
- Կարդում է բառերով,
- կարդում է տառերով,



• Որոշում է տառերի քանակը բառի մոջ:

բ) Գրելու կարողությունների մակարդակը.

• գրում է բոլոր տառերը,

• գրում է բառեր,

• բառերից առանձնացնում է բոլոր տառերը և անվանում է դրանք

• գիտի որոշ տառեր գրել

• ոչ մի տառ չի գրում

գ) Հնչյունային վերլուծական կարողությունները.

• բառերն արտասանում է ոչ ճիշտ շեշտադրությամբ,

• բառերը բաժանվում են վանկերի,

• առանձնացնում է հնչյունը բառից և վանկից,

• հնչյունները արտասանում է որոշակի արատներով,

• ունի խղճուկ, կցկտուր, ցածր խոսք,

դ) Բանավոր կապակցված խոսք,

• անգիր գիտե բանաստեղծություններ,

• գիտե և կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմվածքները, հեքիաթները,

• կարողանում է նկարների շուրջ ստեղծել պատմություն,

• տրված հարցերին պատասխանում է ընդարձակ, համառոտ նախադասություններով

ե) Խոսքի շարահյուսական կառույցը

• Կազմված է հատուկ կառուցվածք ունեցող նախադասություններից,

• Կազմված է պարզ նախադասություններից,

• Անավարտ է թողնում նախադասությունները,

• Բացակայում է տրամաբանական կապը,

• Կազմում է ամբողջական նախադասություններ

Այս բոլորի պարզելը նպատակ ունի ուսումնական գործընթացում հաշվի առնելու և ըստ դրանց դասը կառուցելու, աշակերտների հետ տարվող ֆրոնտալ, անհատական աշխատանքները պլանավորելու և իրականացնելու համար:

## 2. Կազմակերպական խնդիրներ.

1. Երեխային ծանոթացնել նրանց համար նոր ուսումնական գործունեության հետ.

- ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ,
- ծանոթություն դպրոցական կյանքին և կարգուկանոնին,
- ծանոթություն աշակերտների իրավունքներին և պարտականություններին,
- սովորեցնել ճիշտ նստել, ձեռք բարձրացնել, անհրաժեշտության դեպքում ձեռք բարձրացնելիս և պատասխանելիս կանգնել,
- հստակ պատասխանել հարցերին
- լսել ուսուցչի խոսքը,
- սովորեցնել լսել ընկերներին,
- սովորեցնել օգտվել գրքերից և գրենական պիտույքներից,

## Հարմարեցում նոր դպրոցական ուսումնական

### գործունեությանը (ադապտացիա)

Շատ կարևոր է աշակերտների հետ առաջին հանդիպումը: Այդ հանդիպման ժամանակ երեխաների համար այնպիսի պայմաններ կարելի է ստեղծել, որ երեխաները իրար մասին շատ բան իմանան: Այնպիսի գրույցներ կարելի է անցկացնել, որ իրենք բոլորը զգան, որ իրենք բոլորը իրար շատ նման են, ունեն ընդհանուր հետաքրքրություններ, սիրում են խաղալ, ուրախանալ, կարդալ, գրել, նկարել:

Աշխատում եմ, հենց նախաապրենական փուլից սկսած, բացառել գերակայությունը՝ բոլորին տալով նույն իրավունքները:

Այնպիսի պայմաններում եմ երեխաներին ընունում դպրոց, որ նրանք իրենց զգում են սպասված, իսկ դա մեծ արժեք է երեխայի համար:

Երեխաների հետ ծանոթանալիս առաջինը ներկայացնում եմ, պատմում եմ, իմ մասին, թե՛ իբրև ուսուցիչ, թե՛ իբրև անձ: Նշում եմ, թե ինչ եմ սիրում, թե չեմ սիրում: Այդ տարիքին համապատասխան մակարդակով, մատչելի լեզվով պատմում եմ իմ առաջին ուսուցչի, առաջին դպրոցական օրվա տպավորության մասին, իմ հետաքրքրությունների, նախասիրությունների մասին:

Երեխաների հետ անմիջական գրույց եմ անցկացնում: Աշխատում եմ, որ երեխաները ինձ աստիճանաբար վստահեն, սիրեն ու հարգեն: Իհարկե այս բոլորը երկար աշխատանք է պահանջում: Պետք է ուսուցիչը լինի հետևողական:

Պատահում են երեխաներ, որոնք չեն ցանկանում խոսել, նրանց չեն պարտադրում, այլ նրանց հետ հետազայում ավելի շատ են աշխատում:

Նպատակ եմ դնում ավելի շատ խոսեցնել երեխաներին: Մինչև երեխան չխոսի, իր մտքերն ազատ չարտահայտի, նա ուսումնական գործունեության մեջ առաջընթաց չի ապրի:



Բայց փոքրիկի համար խոսելը դժվար է, հազար ու մի պատճառներ կան, պետք է ուսուցիչը ստեղծի բարենպաստ մթնոլորտ որպեսզի երեխան իրեն զգա ազատ, անկաշկանդ:

Տարիներ առաջ մի լեզվական արատ ունեցող աշակերտ ունեի: Շատ խելացի էր, բայց միևնույն ժամանակ շատ ինքնամփոփ: Աշխատում էր չխոսել, որ երեխաները իրեն չծաղրեին: Աշխատում էի մաժամանակ և դասարանին բացատրել ,որ նրան վերաբերվեն ինչպես բոլորին են վերաբերվում, և նրան համոզել, որ ինքը բոլորի նման է: Այդ ամբողջ ընթացքում աշխատում էի լինել հոգատար, հանդուրժող, համբերատար, երեխաներին տալ սեր և գուրգուրանք: Աստիճանաբար բոլոր դժվարությունները հաղթահարվեց: Հիմա այդ տղայի մոտ ամեն ինչ նորմալ է: Այդ ինձ շատ է ուրախացնում: Ամեն հանդիպելիս նրա աչքերում զգում եմ երախտագիտություն: Այդ ինձ անչափ ուրախացնում է: Դասարանական առողջ մթնոլորտում փոքրիկները իրենց ապահով են զգում, իսկ այդ նրանց տալիս է ազատ մտածելու և առանց վախի արտահայտվելու հնարավորություն:

Այս փուլից կախված է հետագա այբբենական և ետայբբենական փուլերի արդյունքները: Հետաքրքիր ուղիներ են որոնում, որպեսզի իմ նպատակներին հասնեմ:

Այս փուլում մեծ կարևորություն են տալիս բանավոր խոսքի զարգացմանը: Այդ նպատակին հասնելու համար շատ հետաքրքիր պատմվածքներ, հեքիաթներ, հանելուկներ, բանաստեղծություններ են կարդում: Դրանից հետո երեխաների ակտիվ մասնակցությամբ վերլուծում ենք:

Այս փուլում մեծ դեր ունի նաև խաղերի ճիշտ ըմտությունը և անցկացումը: Խաղերը կազմակերպելիս նպատակ են դնում զարգացնել երեխաների մտածողությունը, լսողությունը, ուշադրությունը, բառը վերլուծելու կարողությունը, բառապաշարը, տեսողական ընկալումը, ինքնուրույն խոսք կառուցելու կարողությունը: Այս փուլում ուշադրություն են դարձնում նաև համագործակցական ուսուցման վրա: Հենց առաջին օրերից սերտ

համագործակցում եմ ծնողների հետ, բացահայտում եմ ծնողներին, որ ընտանիքը պետք է փոխի իր նկարագիրը և ավելի հետևողական լինի: Խորհուրդներով օգնում եմ ծնողներին ճանաչելու իրենց և իրենց երեխաներին: Խորհուրդ եմ տալիս ծնողներին երեխաների համար շատ կարգալ: Աշխատում ենք միասին սեր արթնացնել կարգալու, սովորելու նկատմամբ:

Ըն Տոլստոյը ասել է. - որպեսզի երեխաները կարգալ սովորեն , պետք է սիրեն կարգալը, կարգացածը պետք է լինի հասկանալի և հետաքրքրաշարժ:

Երեխաների հետ առաջին իսկ օրվանից, աշխատելիս ես ուղորդվում եմ չինական հետևյալ ասացվածքով՝

Ասա՝ ինձ և ես կլսեմ,

Ցույց տուր ինձ և ես կհիշեմ,

Մասնակից դարձրու

Եվ ես կհասկանամ:

Նախաապրբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները շատ են, սակայն նրա արդյունավետ կազմակերպումից է կազմված մյուս երկու փուլերի արդյունքները:

## Օգտագործված գրականություն

1. Զ. Գյուլամիրյան - Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկությունները առաջին դասարանում:
2. Ա.Բյուրքյան, Տեր – Գրիգորյան Լ. «Այբբենարանի» մեթոդական ուղեցույց





## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՇՈՒՐՁ

### ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մեթոդիկայում ընդունված է վերարտադրել անվանել գեղարվեստական ստեղծագործության բովանդակության բանավոր փոխադրումը: Կրտսեր դպրոցականների ուսուցման հարցում դժվար է գերազնահատել վերարտադրելու գործընթացի դերը: Տարրական դպրոցի բոլոր չորս տարիների համար էլ վերարտադրումը համարվում է գեղարվեստական տեքստի շուրջ տարվող աշխատանքներից ամենա- կարևորը: Եվ դա պատահական չէ, քանի որ կրտսեր դպրոցական տարիքում վերարտադրումը համարվում է մենախոսական խոսք կազմելու առաջին փորձը: Հեղինակային տեքստի շնորհիվ երեխան կարողանում է գիտակցված խոսել կարդացածի թեմայի մասին, հաղորդել շարադրանքի տրամաբանությունը, բացահայտել հանգույցը, բնութագրել գործող անձանց, նկարագրել բնության տեսարանները և այլն: Աշակերտների ուսումնական գործունեության կազմակերպման հարցում հնարավոր կադապարից խուսափելու համար նպատակահարմար է կիրառել պատմելու տարբեր ձևեր, որոնք հնարավորություն կստեղծեն բովանդակության փոխադրման եղանակների մեջ տարբերակում մտցնելու և դրանով խթանելու աշակերտների ստեղծագործական կարողությունների ակտիվացման գործը: Տեքստի շուրջ տարվող աշխատանքների շարքում պատմելը կարևորվում է նաև դաստիարակչական առումով: Բովանդակությունը վերարտադրող աշակերտն իր առաջադրանքը այն դեպքում ճիշտ կկատարի, երբ ոչ միայն մանրամասն կվերարտադրի կարդացածը, այլև կկարողանա իր վերաբեր- մունքն արտահայտել կարդացածի մասին: Այսպիսով, վերարտադրումը անհրաժեշտաբար թելադրում է տեքստի գաղափարի ընկալում, հերոսների արարքների դրդապատճառների մեկնաբանում: Վերջնարդյունքում այս ամենը աշակերտին օգնում է գիտակցել շարադրանքի բարոյական կողմը և ձևավորել անհրաժեշտ բարոյական համոզմունքներ: Վերարտադրումը օգնում է



նան գեղագիտական զգացումների ձևավորմանը, աշակերտի գեղագիտական ճաշակի զարգացմանը: Տարրական դպրոցի պրակտիկայում կուտակված է բովանդակության վերարտադրության ձևերի մեծ քաղաքացանություն: Դիտարկումները ցույց են տալիս, որ ուսուցիչների պրակտիկայում առավել գործածական են տեքստի բովանդակության վերարտադրման հետևյալ տեսակները՝ ընդարձակ, հա- մառոտ և ստեղծագործաբար:



# ԽՆԴԻՐԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

## ՄԻՋՈՑ

Ժամանակակից կրթական հայեցակարգերում ավելի է կարևորվում սովորողների բարձրակարգ մտածողության զարգացման խնդիրը: Աշխարհում տեղի ունեցող արագընթաց զարգացումները իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով գիտելիքահեն տնտեսության և տեղեկատվական հասարակության պայմաններում գործող և ապրող մարդու ձևավորման նոր պահանջ: Եվ դա իր հերթին առաջ է բերում կրթության բովանդակության վերանայման ու արդիականացման խնդիր: Հանրահայտ է, որ հանրակրթության առանցքային նպատակներից մեկը աշակերտին մտածել սովորեցնելն է: Առանձնացվում են այդ նպատակին հասնելու երկու հիմնական ուղիներ. մտածողության մասին գիտության՝ տրամաբանության տարրերի ուսուցումը և մաթեմատիկայի ուսումնասիրությունը, ինչը բոլոր ժամանակներում դիտվել է որպես սովորողների տրամաբանական մտածողության զարգացման լավագույն միջոց: Սակայն այստեղ առաջանում են հետևյալ հարցադրումները. արդյո՞ք պետք է տրամաբանության հիմունքները ներառվեն հանրակրթական ծրագրերում: Իսկ միգուցե պետք է համադրե՞լ այս մոտեցումները և տրամաբանության տարրերը ներառել մաթեմատիկայի դասընթացում: Տարբեր ժամանակներում տարբեր շեշտադրումներ են կատարվել ու տարբեր մոտեցումներ են ցուցաբերվել այդ հարցերի լուծման նկատմամբ: 20-րդ դարի վերջին տասնամյակում, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում, նոր մոտեցումներ ձևավորվեցին սովորողների տրամաբանական մտածողության զարգացման խնդրի վերաբերյալ: Այդ ընթացքում ձևավորվեց մեկ այլ մոտեցում ևս, որի էությունը հետևյալն է. տրամաբանական որոշակի գիտելիքներ ներառել մաթեմատիկայի առարկայական ծրագրերում և դրանով հուսալի հիմքերի վրա դնել ինչպես մաթեմատիկական կրթության բովանդակությունը, այնպես էլ սովորողների

տրամաբանական մտածողության զարգացումը: Այդ մոտեցումը ամրագրվեց նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հանրակրթական պետական կրթակարգում» և «Միջնակարգ կրթության պետական չափորոշչում»: Սակայն, դրա հետ մեկտեղ, տրամաբանական գիտելիքները հանրակրթական ծրագրերում ներառելու հարցի վերաբերյալ վեճերը դեռևս չեն հանդարտվել: Այսպիսով, հիմնահարցի վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումների հակասականությունը բավարար հիմք է տալիս եզրակացնելու, որ այն լուրջ հետազոտությունների կարիք ունի, և նրա լուծումից զգալիորեն կախված է կրթության բովանդակության փոփոխության ուղղությունն ու ընթացքը: Հարցի լուծումը պահանջում է նաև որոնել ուղիղներ, որոնք կնպաստեն սովորողների լեզվատրամաբանական մտածողության բնականոն զարգացմանը, ներառված կլինեն մաթեմատիկական հասկացությունների, դատողությունների և մտահանգումների ծրագրային կադապարների շրջանակներում և կունենան սովորողների հետաքրքրասիրությունը բավարարելու ներուժ: Համապատասխան ուսումնական նյութի մեթոդական մշակումը և փորձարկումը խիստ հրատապ է մանավանդ հանրահաշվի դասընթացում տրամաբանության տարրերի բացակայության արդի պայմաններում: